# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ ԾՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ծովինար «05» օգոստոսի 2021թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ս. Բալոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մանուկյան, Հ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Հայտերը բացվել են 2021թ. օգոստոսի 05-ին՝ ժամը 12:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Բերդուս» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գանձակ |
| 2 | «Ոյուտ Սենթր» ՍՊԸ | Ք. Արթիկ, Գ. Նժդեհ 3 |
| 3 | «ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | գ. Վաղաշեն, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, տուն 3 |
| 4 | «Սուսմետ» ՍՊԸ | Ք. Մարտունի, Պողոսյան 16 |
| 5 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | Գեղարքունիքի մարզ, գ. Ծակքար |
| 6 | «Գագիկ-Արմեն Գազշին» ՍՊԸ | Ք. Մարտունի, Չիրոյան 44 |
| 7 | «Նաիրի Շին» ՍՊԸ | Ք. Մարտունի, Մյասնիկյան 115 |

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

Գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովը մասնակիցների հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝ հրավերի պահանջների նկատմամբ.

- **«Նաիրի Շին» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում 2-րդ չափաբաժնի մասով բացակայում էր իր կողմից լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, այնինչ պետք է պարտադիր ներկայացված լիներ: Տվյալ դեպքում խախտվել էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի /Ա/ դրույթը:
- «**Սուսմետ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էր իր կողմից լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, այնինչ պետք է պարտադիր ներկայացված լիներ: Տվյալ դեպքում խախտվել էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի /Ա/ դրույթը:
- **«Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էր իր կողմից լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, այնինչ պետք է պարտադիր ներկայացված լիներ: Տվյալ դեպքում խախտվել էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի /Ա/ դրույթը:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մյուս մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում էին հրավերով սահմանված վավերապայմաններին և պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Կասեցված նիստը վերսկսել 2021 թվականի օգոստոսի 10-ին ժամը 10-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**1-ին չափաբաժին**

Ծովինարի ներհամայնքային փողոցների լուսվորության համակարգի կառուցման աշխատանքներ

| h/h | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 1 | «Բերդուս» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 2 | «Ույուտ Սենթր» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 3 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 4 | «Սուսմետ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 5 | «ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 6 | «Գագիկ-Արմեն Գաշին» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 7 | «Նաիրի Շին» ՍՊԸ | Համապատասխանում է |

**2-րդ չափաբաժին**

Ծովինար համայնքի մշակույթի կենտրոնի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ

| h/h | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 1 | «Նաիրի Շին» ՍՊԸ | Համապատասխանում է |

5. Բավարար գնահատված հայտի գնային առաջարկը՝ ՀՀ դրամով

**1-ին չափաբաժին**

Ծովինարի ներհամայնքային փողոցների լուսվորության համակարգի կառուցման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Բերդուս» ՍՊԸ | 17750620 | 12497414 | 2499483 | 14996897 |
| 2 | «Ույուտ Սենթր» ՍՊԸ | | 13500000 | 2700000 | 16200000 |
| 3 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | | 14200000 | 2840000 | 17040000 |
| 4 | «Սուսմետ» ՍՊԸ | | 14340000 | 2868000 | 17208000 |
| 5 | «ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | 15728952 | - | 15728952 |
| 6 | «Գագիկ-Արմեն Գաշին» ՍՊԸ | | 16308952 | - | 16308952 |
| 7 | «Նաիրի Շին» ՍՊԸ | | 17677080 | - | 17677080 |

**2-րդ չափաբաժին**

Ծովինար համայնքի մշակույթի կենտրոնի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Նաիրի Շին» ՍՊԸ | 11535060 | 11427500 | - | 11427500 |

6. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ կասեցնել հանձնաժողովի նիստը.

- էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ 2021 թվականին օգոստոսի 13-ին, ժամը 13-30-ի ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում գտնվող Ծովինարի համայնքապետարանի վարչական շենքում՝ գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը, ժամը 13-30-ին, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ____________________ Ս. Բալոյան

Անդամներ՝ ____________________ Ա. Մանուկյան

____________________ Հ. Գալստյան

Քարտուղար՝ ____________________ Ժ. Խաչատրյան